ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Արգենտինայի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ «Կողմեր»),

Մտադիր լինելով խրախուսել համագործակցությունը երկու պետությունների միջև,

Ցանկանալով դյուրացնել փոխադարձ մուտքի արտոնագրերի տրամադրումը երկու պետությունների երիտասարդներին, ովքեր մտադիր են մուտք գործել և մնալ Կողմերի պետությունների տարածքներում արձակուրդի կամ զբոսաշրջության նպատակով, ինչպես նաև տրամադրելով նրանց հնարավորություն՝ կատարելու կարճատև եկամտաբեր աշխատանք, որը կօգնի նրանց հոգալու իրենց այցելության ծախսերը, կավելացնի իրենց աշխատանքային փորձը և կնպաստի մյուս Կողմի պետության լեզվի, մշակույթի և հասարակության վերաբերյալ գիտելիքների բարձրացմանը:

համաձայնեցին հետևյալ Արձակուրդի և աշխատանքի ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ 1

Յուրաքանչյուր Կողմ, իր ազգային օրենսդրությանը համաձայն, կտրամադրի մյուս Կողմի քաղաքացիներին բազմակի մուտքի աշխատանքային արձակուրդային ժամանակավոր մուտքի արտոնագիր, որը վավեր է երեք (3) ամսվա ժամանակահատվածում՝ սկսված տրման ամսաթվից, և տասներկու (12) ամսվա օրինական կեցության համար՝ մյուս Կողմի տարածք առաջին անգամ մուտքի օրվանից (այսուհետ՝ աշխատանքային արձակուրդային մուտքի արտոնագրեր).

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որոնք մշտապես բնակվում են Հայաստանի Հանրապետությունում կամ Արգենտինայի

Հանրապետության քաղաքացիներ են, որոնք մշտապես բնակվում են Արգենտինայի Հանրապետությունում,

բ) դիմում ներկայացնելու պահին նրանց տարիքը տասնութից (18) ներառյալ երեսուն (30) է,

գ) չեն ճանապարհորդում իրենց խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների ուղեկցությամբ,

դ) կրում են մյուս Կողմի կողից տրամադրած վավերական անձնագիր,

ե) նախկինում չեն մասնակցել Արձակուրդի և աշխատանքի սույն ծրագրին,

զ) ունեն մեկնման և հետադարձի տոմս կամ նման տոմս գնելու համար անհրաժեշտ միջոցներ,

է) համապատասխան հյուպատոսական մարմնի գնահատմամբ՝ ունեն իրենց ծախսերը հոգալու համար ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ՝ այցելության սկզբնական ժամանակահատվածում իրենց ապրուստը հոգալու համար,

ը) վճարել են մուտքի արտոնագրի համար նախատեսված վճարը,

թ) համաձայնել են ունենալ ամբողջական բժշկական ապահովագրություն իրենց այցելության ժամանակահատվածի համար,

ժ) չունեն դատվածություն:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները Արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագիր ստանալու համար կարող են դիմել մյուս Կողմի պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերից յուրաքանչյուրը թույլ կտա մյուս Կողմի քաղաքացիներին, որոնք կրում են վավեր արձակուրդի և աշխատանքի արտոնագիր ընդունվել աշխատանքի որպես նրանց այցելության ոչ պարտադիր բաղադրիչ՝ ուղղված ճանապարհորդության ծախսերը հոգալուն և չի հանդիսանա այցելության հիմնական նպատակ:

ՀՈԴՎԱԾ 4

Արձակուրդի և աշխատանքի վավերական մուտքի արտոնագիր ունեցող անձինք իրավունք կունենան աշխատել իրենց այցելության տասերկու (12) ամիսներից վեց (6) ամսվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 5

Արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագրի հիման վրա մյուս Կողմի պետության տարածք մուտք գործած քաղաքացիներն իրենց այցելության ողջ ժամանակահատվածում պետք է ենթարկվեն ընդունող պետության համապատասխան ներպետական օրենսդրությունը և չպետք է մշտական աշխատանքի անցնեն այցելության ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերից յուրաքանչյուրը կարող է մերժել աշխատանքային արձակուրդային մուտքի արտոնագրի դիմումը՝ հանրային անվտանգության, հանրային կարգի կամ հանրային առողջության պատճառներով:

ՀՈԴՎԱԾ 8

Կողմերի տրամադրող Արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագրերի տարեկան քանակը սահմանվում է Կողմերի փոխադարձ

համաձայնությամբ՝ դիվանագիտական ուղիներով հայտագրերի փոխանակման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9

1. Սույն Համաձայնագիրը կարող է վերանայվել ուժի մեջ մտնելու պահից երկու (2) տարի հետո և հաջորդաբար՝ Կողմերից որևէ մեկի պահանջով:

2. Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհանդիսանան դրա անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ժամանակավորապես կասեցնել սույն Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ անվտանգության, հանրային կարգի կամ հանրային առողջության պատճառներով: Յուրաքանչյուր կասեցման դեպքում մյուս Կողմին ծանուցվում է դիվանագիտական ուղիներով՝ նշելով կասեցման մեկնարկի ամսաթիվը և, հնարավորության դեպքում, կասեցման տևողությունը:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրարկման հետ կապված բոլոր վեճերը Կողմերի միջև կլուծվեն դիվանագիտական ուղիներով բանակցությունների միջոցով: Խորհրդակցություններ անցկացնելու մասին առաջարկը կներկայացվի դիվանագիտական ուղիներով, և առաջարկը ստացող Կողմը կպատասխանի պատասխանի վաթսուն (60) օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 12

Կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, սույն Համաձայնագրի դադարեցումը կամ կասեցումն ամբողջությամբ կամ մասնակիորեն չպետք է խոչընդոտի վավերական Արձակուրդի և աշխատանքի մուտքի արտոնագիր ունեցող անձին մուտք գործել կամ մնալ մյուս Կողմի

պետության տարածքում և այնտեղ աշխատել մինչև մուտքի արտոնագրի ժամկետի լրացումը՝ սույն Համաձայնագրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 13

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալուցև կգործի անժամկետ:

2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ ծանուցելով մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով՝ դադարեցումից առնվազն երեք (3) ամիս առաջ:

Կատարված է Բուենոս Այրես -ում 2014թ. հուլիսի 7-ին երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով: Մեկնաբանությունների ժամանակ առաջացած հակասությունների դեպքում, նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2014թ. հուլիսի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Արգենտինայի Հանրապետության Կառավարության միջև արձակուրդի և աշխատանքի ծրագրի մասին» Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող հայերեն բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝

Սաթենիկ Աբգարյան